



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ  
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին

պատճենը՝ Կենտրոնի ՀՏ պետ  
պարոն Ա. Հարությունյանին

**Հարգելի պարոն Թադևոսյան**

Ի պատասխան Ձեր 20.01.2016թ. N 003 գրության՝ հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով իրազեկման կարգով տեղեկացնում եմ.

1. 2014թ. հունվարի 20-ից ՀՀ և ԼՂՀ հարկման հարցերը կարգավորվում են համապատասխան հուշագրով: Տվյալ դեպքում, նշված ժամկետից հետո ԼՂՀ-ում գրանցված կազմակերպությունների հետ իրականացված (իրականացվող) գործարքների և դրանց դիմաց վճարված եկամուտների հարկման առանձնահատկությունների հետ կապված՝ առաջարկում եմ այցելել Ձեր հաշվառման վայրի հարկային տեսչություն և տեղում ստանալ Ձեր կողմից բարձրացված հարցերի պատասխանները:

2. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝ նույն օրենքի իմաստով ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը ՀՀ-ում է, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Նույն օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ

տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը ՀՀ-ում է, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը (որտեղ բնակվում է նրա ընտանիքը) և նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական գործունեության իրականացման վայրը: **Նույն օրենքի իմաստով ոչ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը նույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան ռեզիդենտ չէ:**

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված պասիվ եկամուտներին է դասվում՝ **Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը:**

Հաշվի առնելով վերոգրյալը, տվյալ դեպքում, եթե վարձակալական պայմանագրի առարկա հանդիսացող **անշարժ գույքը գտնվում է ՀՀ տարածքից դուրս և դրա սեփականատերը ՀՀ քաղաքացի չէ**, ապա «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասին և 11-րդ հոդվածին համապատասխան, **հարկային գործակալը՝ վճարված եկամտից եկամտային հարկը հաշվարկելու և պահելու պարտավորություն չի կրում:**

**Հարգանքով**



**Վ.Միրումյան**